

1843 ԲԱԶՄԱՎԷՊ 1910

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ
ԿԵ
ՓԵՐՐՈՒՐ
Թ. 2

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ՊԱՏԿԵՐԱԶՈՐԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՀԱՆԱԽՕՍԱԿԱՆ

ԱՆԿԱՆՈՆ ԵՐԿՄՈՒՆԻՔ

ՄԵՐ ՆԱԽՆԻՔ ԻՆՁՊԷՍ Կ'ԵՐԿՆՈՒՆԻՆ

Աւետարանական պատուէր էր քրիստոնէից՝ «Ամենեւին մի՛ երդնուլ»։ Սա այնպէս խոր տպաւորուած էր եկեղեցւոյ Հարց մտացը վրայ, որ անոնք ճշմարիտ սարսափ մը կ'իմանային երզմանէն։ Ոսկեբերան մեկնելով նոյն տեղին, կը մերժէ որ եւ է պատճառաւ երդնուլը, նոյն իսկ արդարն ալ, «աւելի» եւ «ի չարէն» կոչելով «երդնուլն իսկ, եւ ոչ եթէ սուտ երդնուլ» (Մեկ. Մտթ. Ա. փէ)։ Գրան զայն ուժգին կը խօսի մեր հին Հայրերէն Յովհ. Մանդակունի, որ նոյն անկանոնութեան դէմ գրեց ամբողջ ճառ մը, «Վասն չար սովորութեան երզման» վերնագրով (ճառք, փէ)։ «Ամենեւին մի՛ երդնուլ, կ'ըսէ հոն, մի՛ սուտ եւ մի՛ արդար. զի երդումն արդար երբեք ոչ է, այլ ի սատանայէ է» (էջ 110)։ Այս համոզումն՝ աւելի կամ նուազ ուժգնութեամբ՝ սեպհականութիւն մնաց նաեւ յաջորդ դարուց գրեթէ բոլոր եկեղեցական Հարց, փԵՐՐՈՒՐ 1910

Մանդակունւոյն յիշեալ ճառը որքան մանրամասն՝ այնքան հետաքրքրական է իւր բովանդակութեամբ, եւ անոր համար արժանի մեր շնորհակալութեան։ Ասկից կ'իմանանք՝ թէ իւր ժամանակակից Հայք որչափ խանգարուած էին բարուց, եւ որքան դիւրաւ կ'երդնուին՝ իրաւ կամ սուտ, առ հարկի կամ առանց հարկի, որպէս թէ Աւետարանի կամ Եկեղեցւոյ պատուէրը կատարելապէս անձանօթ լինէր իրենց։ «Յնդանական սովորութենէն, կ'ըսէ նա, եւ չարիքն իսկ ոչ երեւին» (110), եւ երդմնելու ժամանակ վարժութենէն եւ ոչ իսկ կը զգային՝ թէ կ'երդնուն (113)։ Խօսքէն յառաջ երդումը կ'եղնէր ամենուն բերանէն, կը յաւելու. իսկ ցոփողիք եւ աղտեղարանք՝ իրենց ըսելիքը դեռ չխորհած՝ երդումը պատրաստ ունէին լեզուին վրայ (114)։

Կը զարմանանք, եւ դժուարաւ պիտի հաւատայինք՝ եթէ նոյն ականատես վրկայն չհաստատուէր, թէ Հայոց մէջ ամէն դասակարգ եւ ամէն աստիճանաւոր նոյն ախտով վարակուած էին։ Եւ որովհետեւ սովորութեամբ եւ անխտիր երդումը ճշ-

մարտութեան շատ դաշնակից չէր կարող լինել, ուստի թագաւորը, իշխանը, եպիսկոպոսը, քահանայը, արք, կանայք, ծերեր ու տղայք՝ «երդմուսն ստաւ» կը տեղային ամէն առթի մէջ և ամէն տեղ (115)։ Անոնք որ տան կամ փողոցներու մէջ իւրարու հետ կը խօսակցէին, երդումը հետն ունէին (113, 114, 115)։ Տղայք որ կը խաղային, իրենց յաջողութիւնը կամ անաջողութիւնը երդմամբ կը հաստատէին (114)։ Վաճառականք իրենց վաճառուց լաւութիւնը կամ զնոց արդարութիւնը ցուցնելու համար երդման կը դիմէին (114, 115)։ Թշնամանողք իրենց լուստանքները կը սաստկացնէին երդմամբ (114)։ Երբ զգաստ անձինք կը ցուցնէին այդ սովորութեան անպատեհութիւնը, զեղծանողք կը պատասխանէին. «Երդմամբ հաստատեմք զերբանս, զի առանց երդման ոչ հաւատարմ» (115)։ որ է ըսել՝ յոռի վարժութիւնը լոկ խօսից վրայ հաւատքը ցըրուեր էր ի սպառ անոնց միջէն, կային ալ՝ որ պարզապէս կատակի համար՝ «Ընդ խաղ ինչ ընդ վայր» կ'երդնուին (113)։

Եւ շատ իրաւացի էր՝ երբ պերճաբան հայրապետը կ'աղաղակէր բարկութեամբ. «Այդ զի՛նչ արասցուք զահեղ ամբարըշտութիւնս ախտիս այսորիկ. զի իբրեւ զհուր հոսեցաւ ընդ ամենայն երկիր, և լցան բերանք ամենայն բոցով անօրէնութեան ախտին» (113)։

Պարզ երդնուլը չէր թրեւս՝ որ կը զարհուրեցնէր զինք, որքան իրերը որոց անուան կ'երդնուին։ Արեգակն, լուսին և աստղեր, որոնք Հայոց նախկին ու լքեալ աստուածներն էին, քրիստոնէութեան շրջանին տակաւին բաժին մ'ունէին իրենց հին պաշտամունքէն՝ երդման մէջ, զոր կ'ընծայէին Հայք իրենց՝ — Գրոյսը, մարմնոյն

ազնուականագոյն անդամը, երդում կ'ընդունէր իւր բերանէն՝ — Այբը, զգայարանաց ամենէն զեղեցիկը, անոնք եւս կը պատուէին երդմամբ (115)։

Գուցէ զեռ տանելի պիտի լինէին այս աւանդական հեթանոս ձեւերը, եթէ անոնց հետ չխառնուէին աւելի նուիրական կոչումներ. զի նոյնքան թեթեւութեամբ և անտարբերութիամբ կ'երդնուին անոնք նաեւ Աստուծոյ վրայ (անդ), Քրիստոսի խայիւ ու յարարանաց վրայ, մարգարէից, ստաքիւրց և մարտիրոսաց վրայ (111), զոր Մանդակունին չի խղճեր անուանել «սատանայական երդումն» (անդ), և «կատարեալ ուրացութիւն» (115)։ Այսպիսիք կը կոչուէին երդմնահարք (112), և իրենց գործը՝ երդմնահարոյրիս (Թճիւլ. Զ. 52)։

Հայը միշտ աւանդապահ եղած է ինչպէս իւր առաքինութեանց, նաեւ իւր մոլութեանց մէջ, և զարմանք չէ՝ որ երդմնահարութեան այդ հին ախտը պահուած լինի զեռ ծօ դարուն։ Այդ ժամանակի Մանդակունին՝ Միսիթար Գոշն է, որ երկարօրէն կը գրէ այս մասին Դատաստանագրոց՝ մէջ (Նիւդր. Ը)։ Կ'ըսէ նա՝ թէ տէրունական հրամանը «տեսանեմք այժմ կոխան եղեալ ի մարդկանէ. քանզի յաճախեաց վայրապար երդնուլն»։ Երդումը կը մտնէր սովորական խօսակցութեանց մէջ «յոչինչ պէտտ»։ և այն՝ «ի փողոցս և ի հրապարակս և ի բանակառութիւնս», մանկանց՝ ծերոց և շատ անգամ քահանայից իսկ կողմանէ. Դատաստագր յատեան չհասած՝ «ի կռուելն և ի ճանապարհին զալն բազում անգամ երդնուն սոսկալի օրինակաւ»։ Իսկ երբ կը հասնէին դատաւորին առջեւ, սուրբեր կը դառնային և կը դժուարէին տալ օրինական երդումն՝ իբրեւ հակառակ Աւետարա-

1. Պարսիկներն այդ ժամանակ զեռ երդում կու տային յանուն աստուածացեալ տարեաց. Նապուէ «Երդմու... յարեգակն և ի քուր և ի կրակ» (Փաւս. Գ. Ժգ)։ Եւ Յազգիւր կը կրկնէր «զահաւոր երդումն յարեգակն» (Նիւդր. Ը)։

2. Այդոյ շարժանկութիւնը և կատարման նկարագիրը կը տեսնենք Միսիթ. Գոշի առակաց մէջ. ս.բ. կատուն

խոստանալով խնայել մկանց, «ծնոմ ի գլուխ եղեալ՝ երդմամբ հաստատեաց զայս» (ՂԱ)։ Հրեայք ալ ունէին այս ձեւը, զոր Քրիստոս արգիւնց՝ ըսելով. «Մի՛ ի գլուխ քո երդնուցաւ» (Մաթ. Ե, 36)։

3. Էջերը կը դնեմ ըստ հրատարակութեան Վ. Վ. Բատամանյան, 1880, ի վաղարշապատ։

նին (անդ, էջ 46)։ Երբ կը յանդիմա-
նուէին վայրապար երգմանց համար, կը
պատասխանէին իրենց Ե դարու նախնաց
պէս. «Զի ոչ հաւատան բանից մերոց,
վասն այնորիկ երդնումը»։ Եւ շատ տա-
րօրինակ պարագայ մը, «բամբասեն ըզ-
ֆրիստոսի Աւետարանն՝ թէ ընդէր հրա-
մայեաց բնաւ ոչ երդնուլ» (47)։ որպէս
թէ խղճէին այդ հրամանն ոտնակոխ ընել։

Մխիթար երգման կրկին ձեւեր կ'ա-
ւանդէ, խոստովանութեան և ուրացու-
թեան. առաջինն օրինաւոր և երկրորդն
ապօրինի, որոց բացատրութիւնը պիտի
տեսնենք իրենց տեղւոյն մէջ։ Երկրորդ
կարգէն կը զնէ հետեւեալ սովորութիւնը,
որ կը զործադրուէին ռամիկներէն կամ
ռամկարար՝ այլազգեաց պաշտնջելովը .
այս ինքն՝ եկեղեցի մանկով՝ ճրագը մա-
րել¹. — բերանով փչել ջրոյ և ձիթոյ
վրայ. — գետինը խաչ նկարել ու կռ-
խել. — շան ձեռքն բռնել. — ձեռաց
մէջ ոսկր առնուլ. — գետնի վրայ երկու
ծիր զծել, և մէկէն միւսը մտնել²։ Ասոցմէ՝
կ'ըսէ նա՝ քրիստոնեայն պարտի մա-
հու չափ շգուշանալ (51)։

Մոյնպիսի անպատեհ երգմանց դասէն
էր և այն՝ զոր կը տեսնէր Գրիգոր Տա-
թեւացի իւր օրով. որ է երդնուլ «յայիսն
և ի մօրոսն Աստուծոյ», զոր ինք «ծանր
մեղք» կ'անուանէ (Փրզ. հտ. ձմր. Բ, 16)։

ՕՐԻՆԱԿԱՆ ԵՐԳՄՈՒՆՔ

Եթէ Հարք կը խորշէին ընդհանուր
երգմանէն, աւելի ներդաճիտ էին սակայն
օրինական երգման մասին, որ ոսկեզա-
րու մատենագիրներէն կը կոչուի նաեւ
«ուխտ»։ Ներդաճիտ էին անոր համար՝

որ ամէն ժամանակ և ամէն ազգաց ու
կրօնից մէջ օրինական երդումը տրամաբե-
տող ոյժ մը ստացած էր. ուսկից քրիս-
տոնէութիւնը չէր կարող դիւրաւ ձեռնպահ
մնալ, եթէ ոչ չափով մը, երբ պիտի
կենցաղակցէր և խնդիրներ ունենար ուրիշ
կրօնից հետեւողներու հետ։

Նոյն ինքն Մանդակունին կ'որոշէ մաս-
նատարապէս առ ի սովորութենէն կատա-
րուածը՝ «երդմունս սուտս» բացատրու-
թեամբ (115), և չափով մը թոյլ կու
տայ օրինականը՝ երբ կ'ըսէ. «Մի՛ վայ-
րապար ընդ Աստուծոյ յուխտ մտցուք, և
զսուրբ անունն Աստուծոյ ընդ երգմանն
կապեցուք» (116)։ — Շնորհալին ալ
համամիտ գտուելով յայտ, կը յանձնա-
րարէ իշխանաց զգուշաւոր լինել նաեւ
այդպիսի առթից մէջ. «Մի՛ եղից ձեզ
յոժարութեամբ դիմել յերդմունս... առանց
մեծագոյն հարկի» (Ընդհ. Վննետ. 192)։
— Մխիթար Գոշ կը պատուիրէ այն ժա-
մանակ միայն երդնուլ՝ երբ «դատաւորն
հրամայիցէ» (46). և ասոր համար ալ
իւր մեղանչական գործի՝ ապաշխարու-
թեան կանոններ կը սահմանէ (57-8),
որոնք թէ՛ զործածութեան մտեր են եր-
բեք՝ չեմ գիտեր, և կը տարակուսիմ։

Գորշն քանի մը տարի յետոյ այս խն-
դրով զբաղեցաւ նաեւ Զաքարիա եպս.
Ծործորեցի, լուսամիտ անձ մը, որ պա-
տասխանելով Սիւնեաց Յովհ. եպիսկոպոսի
դիտողութեանց, կ'արդարացնէ դատաս-
տանական երդումը, զոր կը գտնէ համա-
ձայն Ս. Գրոց հոգւոյն։ Ի մէջ այլոց
կ'ըսէ. «Յորժամ տանջի լսողն (դատա-
ւոր) և չհաւատայ բանին և երդմեցուցա-
նէ, ըստ այսմ պատճառի ոչ ինչ է վնաս»։
Անոր պայմաններն ալ կը զնէ այսպէս.
«Ելիս այս ինչ պահանջի յերդումն. զի
վասն ճշմարիտ իրաց երդումն. և արդա-

1. Այդ սովորութիւնը դեռ կը պահուի հայ գաւառաց
մէջ։

2. Այդ ձեւոց իմաստը գուշակել դիւրին է. մարել
քրիստոնեական հաւատքը. կոխել փրկագործութեան խոր-
հուրդը. շան հաւասարել. մեռնել, ոսկր դառնալ, մկրտ.

ջրոյն և մեռնին շնորհը մերձել. ծիր փոխել՝ կը թուի
կրօնափոխ լինել, ուրանալ։

3. Թե՛ւս այդ բառն աւելի էր նշանակէ դաշն երգ-
մամբ կամ լոկ։

բութեամբ երդնուն սրտի մտօք. և դատաստանաւ երդնուն՝ յորժամ հրաման ունիցին»։ Ասկից կը զատէ ինքնակամի ու կեղծը, զոր կը դատապարտէ. « Զի որիչ է երդումն ուտել անձամբ վասն միոյ փողոյ և սուտ, և որիչ է երդումն տալ առաջնորդաց և դատաւորաց՝ վասն ճշմարտութեան հաւատալոյ » (Թուղթ)։ Բնականապէս Զաքարիա շատ հեռի է այսպիսի երդմանց մեղանշականութեան ու պատժոյ գաղափարէն։

Գր. Տաթևակցին նախորդներէն աւելի խիստ է. բայց թոյլ կու տայ երդնուլ «անհաւատից» առջեւ միայն. և այն՝ եթէ լինի «գործ մեծ վասն հաւատոյ կամ վասն արեան փրկութեան» (Հտ. ձմր. 16)։ — Վերջապէս ունինք Եկեղեցւոյ հին ու նոր սովորութիւնը՝ զոր պիտի տեսնենք յաջորդաբար, և որ կը համաձայնի նոյն Հարց տուած ազատութեան հետ։

Ուսումնասիրութեանս նիւթը բաւական բարդ է. զի այլ և այլ դարերու մէջ կը հանդիպինք երդման պէսպէս ձեւերու, որոնք մեծապէս կը տարբերին իրարմէ, ցոյց տալով տոհմային մտածութեանց ու բարոց հետաքրքրական յեղաշրջութիւն մը։ — Դարձեալ՝ խնդրոյս վրայ կանոնաւորապէս խորհելու ժամանակ՝ մեր մշտաց մէջ կը զարթնուն իւրմբ մը հարցեր. զոր օրինակ՝ ե՞րբ կ'երդնուին նախնիք, ո՞ւր, ի՞նչ բանի վրայ, ի՞նչ ձեւով, և այլն, որոնք հարկ է որ առանձնաբար զբաղեցնեն զմեզ այս տեղ. և անոնց մէջ պիտի տեսնենք ժամանակեան տարբերութիւնքն ալ։



Ա. ԱՌԻՓԲ ԵՐԴՄԱՆ

Երդման բնութիւնը կը պահանջէր՝ որ անոր պատճառները լինէին ծանր խնդիրներ միայն, որոց մէջ նիւթական կամ բարոյական կարեւոր փնաս մը տեսնուէր՝ խափանելու, կամ նոյնպիսի մեծ օգուտ մը՝ ձեռք բերելու ի նպաստ ընկերութեան և կամ անոր անդամոց։ Հարկ էր դար-

ձեալ՝ որ հանրութեան օրէնքը կամ սովորութիւնն յարմար դատէին երդման գործակցութիւնն այս կամ այն առթիւն կամ պարագային մէջ, իսկ այս հարկն այն ժամանակ կը զգացուէր՝ երբ առաջադրեալ վարձանին հասնելու որիչ բաւական կամ ապահովիչ միջոցներ չլինէին ի ձեռին։ — Հայ անցեալէն երդման իմ յիշած առիթներն են հետագայը։

1. — Կենդանական ինկիլթ։ — Այն ամէն վիճեր՝ որոնք դատաստանի նիւթ կը կազմէին, ի սկզբանէ հետէ ենթակայ էին երդման՝ զոր ատեսան ինքնին կը պահանջէր, Զայս կը հաստատէ Մանդակունին՝ երբ կը յորդորէ իւր ծանօթ ճառին մէջ՝ «ոչ նեղի զոք և զրկի, և ոչ հակառակօրեամբ երդումնս սատանայական» կատարել (116), ուր կը մտնեն առեւտրական և կալուածական գործեր, հարստահարութիւնք, զեղծմունք ի փնաս պլոց, և այլ ամէն այսպիսիք։ — Ըստ Միթթար Գոշի՝ այսպիսի դատերու համար այն ժամանակ միայն կարելի էր երդնուլ՝ երբ վկայ չգտնուէր (53-54)։ Նոյնը կը կրկնէ Ծործորեցին ալ իւր Թղթին մէջ. «ի դատաստանի՝ որ վկայ ոչ լինի»։

2. — Քրեական յանցանքներ։ — Ասոնցմէ կը թուէ Մի. Գոշ չորս գլխաւորներ. գողութիւն, շնութիւն, սպանութիւն և աւազակութիւն, որոնք միշտ ու ճիրներ համարուած են հին ժամանակ. և որոնց պատիժը սաստիկ ու ջախջախիչ լինելով ամբաստանելոյն համար, անհրաժեշտ էր երդումը դատաստանի մէջ՝ երբ վկայ չկար եղեռնը հաստատող (54)։

3. — Հաստատարմութիւն առ կրօն։ — Այս գործը կրկին իմաստով առնելու ենք. մին՝ անձին հաւատոց հաստատութեան ցոյց մը. և միւսը՝ պաշտպանութիւն հասարակաց կրօնից կամ Եկեղեցւոյ։ Առ այս գեղեցիկ օրինակներ կ'ընծայէ մեզ Վարդանանց պատեհաբանը։

Միհրնեքեհ Բազկեքտի կողմանէ նա՝ մակ մը գրելով Հարց, կ'առաջարկէր փոխանակել իրենց կրօնը կրակապաշտութեան հետ։ Անհեթեթ առաջարկու-

թիւն, որուն պատասխանեցին Հայք ընդարձակ թղթով մը, որով կը ջատագովէին քրիստոնէութիւնը և իրենց անխախտելի փարուքն անոր: Եւ որովհետեւ կասկածելի հոգիներ անպակաս էին Հայոց մէջ, հաստատելու համար բոլորին ներքին մասնակցութիւնն ալ, ամբողջութեամբ, կաթողիկոս, եպիսկոպոսներ, երիցուք և նախարարք, «անսուտ երդամար եղին վկայութիւն՝ կենօք և մահու ի նմին կալ հաստատուն» (Եղիշէ, Բ): Այս նամակը զայրացուց զՅակոբեան, որ հրամայեց նախարարաց ի դուռն երթալ: Անոնք մեկնելէ յառաջ երկրորդ անգամ «նովին ուխտու հաստատեալ» Յովսէփ կաթողիկոսի ձեռամբ, ապա զնացին (անդ):

Հասնելով հոն մեր վրաց և Աղուանից իշխանք, տեսան որ Յակոբեանի ճիւղնայց մէջ բռնուած էին. կամ պէտք էր մազդեզականութիւնն ընդունել, և կամ յանձն առնուլ երբեակ կորստներ, անձանց, հայրենեաց և եկեղեցւոյ: Նախամեծար համարեցան ուրացութիւն մը կեղծել. բայց նախապահեատ մը պէտք էր՝ կեղծը ստուգութեան չփոխուելու, և միանգամայն համոզելու համար զՎարդան՝ որ կը հակառակէր ուժգին. երդումն էր պրկ: Ուստի բոլորը միասին «երդմունք» յետ զերծանելու՝ հնազանդել սպարապետին հրամանաց, և տալ իրենց արիւնն հաւատոց պաշտպանութեան և աշխարհին փրկութեան համար. և մինչեւ իսկ յանձն առնուլ՝ եթէ հարկ լինի՝ օտարութիւն և ամբողջութիւն կրօնից համար: Ի տես միջ լուսնիդին՝ որ կը սպառնար, և այս հանդիսակնի հարեհանուէր անկեղծ ուխտին՝ յուզուեցաւ ու լացաւ Մամիկոնեան առիւծը. ընկճուած էր, և զիջաւ (Փարպ. Ի): — Մինչդեռ կը դառնային ի Հայաստան, ճանապարհին վրայ ամէն անգամ որ դաշնակից նախարար մը կ'անջատուէր խմբէն՝ իւր գաւառն երթալու, նախ կը կրկնէր «զնոյն ուխտ երդման», կ'ըսէ պատմիչը (նոյն, Ի):

Այն պահուն՝ ուր Հայք ապստամբութեան դրօշը պիտի պարզէին, ի մի հա-

ւաքուած մարզպանը, բոլոր նախարարք ու սեպուհք, և ամբողջ բանակը, «երդունալ» ամրապնդեցին առաջին ուխտը, կամ «հաստատէին զերդումն», (նոյն, ԼԲ): — Նոյնպիսի սրտառուչ տեսարան մը կը պարզէ մեզ Վահանեանց ապստամբութիւնը. բոլոր զինակիցք յառաջ եկան, և զինուց փայլունին ու շաշիւնին մէջ մի առ մի երդուան հաւատարմ մնալ Գրիստոսի սուրբ հաւատոց (նոյն, ԿԶ):

4. — Նիզակակցոյրիս: — Կրնար կատարուիլ թէ օտարաց և թէ ազգայնոց հետ. և զոր յաճախ կ'ամրացնէին երդմամբ:

Պէսպէս օրինակներ կան ասոր, որոց հնազոյնը կը տեսնենք Բ Արշակայ գործոյն մէջ: Սա յեղյոյնեան և ըմբոստ նկարագիր մը, որպէս զի Շապուհ զինք միշտ զինակից բռնէ՝ «եղդումն պահանջէր ի նմանէն», ըսելով. «Հաւանեաց և երդոյր ինձ յօրէնս քո, զի մի՛ ստեցես ինձ»: Արշակունին թէեւ անյօժար, հարկադրեցաւ տալ անոր «ուխտ խաղաղութեան», որ ապահովեց զՇապուհ (Փաւս. Գ, Ժգ, Ժդ):

Վարդանանք իրենց պատերազմին առթիւ կարօտ էին զրացի ազգաց ձեռնառութեան. ուստի զիմեցին փոքր թէոդոսի օգնականութեան, յիշեցնելով Յունաց հետ հին դաշինք մը: Անոնք բանալով իրենց յիշատակարանները, «զնոյն ուխտ հաստատութեան ի ներքս գտանէին», կ'ըսէ Եղիշէ (Գ):

Հոնաց նիզակակցութիւնն ալ խնդրեցին, որոնք յօժարութեամբ ընդունեցան և փութացին «երդմամբ յուխտ մտանել». փոխարէն «յանձն առին և զերդումն քրիստոնէից» (անդ): Մեծ ճակատամարտին չկրցան զալ. սակայն յետոյ երբ Հայք յիշեցուցին անոնց «զուխտ» զոր եղեալ էր ընդ Հայս և անսուտ երդմամբ հաստատեալ, յարձակեցան Պարսից սահմանները և աւերեցին ի նպաստ մեզ (նոյն, Է):

Ապստամբութեան ճգնաժամին մէջ՝ երբ Աղուանից ազատը, որ ի Պարսկաստան

— գուցէ և ուրիշ անգամ — կնքուած երգ-
մամբ «ուխտակիցք էին Հայոց», գուժեցին
Պարսից գալուստն իրենց վրայ և չա-
րիքնեբլը, Վարդան գնդով մը գնաց հա-
սաւ անոնց օգնութեան, այսպէս յարգե-
լով իւր տուած երդումը (Փրպ. ԼԳ. Ե-
դիշ. Գ)։

Աշոտ պատրիկ բազրատունի՝ բռնա-
դատուեցաւ նախարարներէն՝ յարձակիլ և
հալածել Հայաստանէն հարստահարող օ-
տար տարբերը։ Վստահութեան փորձ
մ'ուզեց նա, ուստի նախ «դնէին դաշինս
ոխտի առ միմեանս»... աննեկ պահել
զսէր միարանութեան», և ապա ձեռնար-
կեցին իրենց նպատակին (Ղեւոնդ, ԻԶ)։

Ծ. — Հայտարարեալ — Օրինաւոր էր՝
գինուց փոթորկէն յետոյ՝ երդմամբ ապա-
հովել իրարու միտք ապագայ շփոթու-
թեանց դէմ։ — Աբաս սպարապետ, Սմբատ
բազրատունայ հօրեղբայրը, ձերբակալեց
ու բանտեց Վրաց իշխանն Ատրնեքսեհ,
յետոյ Գէորգ կաթողիկոսի միջնորդու-
թեամբ և զրաւակնով խոստացաւ ար-
ձակել, փոխարէն «երդման» գիր տալով,
զոր սակայն չպահեց (Թհ. ԿԶԴ. Լ)։

Աշոտ արծուի բռնեց իւր հօրաքե-
ռորդին ու թշնամին Հասանը։ Անոր կեան-
քը վտանգի մէջ էր. միջամտեց Յովհաննէս
հայրապետ, և փրկանք տրուելով բան-
տարկելոյն ամբողջ Սեւանայ մէջ, «սաս-
տիկ երդմանց» գիր տուաւ Աշոտ չմասե-
լու անոր (նոյն, ԼԲ)։

Աշոտ Երկաթ և աները Սահակ իշխան
Գարդմանայ՝ բանսարկուաց թելադրու-
թեամբ զրգոռած՝ ճակատեցան իրարու
դէմ։ Դեռ չբաղիւած, նախարարը յոր-
դորներով խափանեցին եղբայրասպան կոի-
ւը. «զաշինս հաստատեն խաղաղութեան»,
տալով իրարու «բազում ուխտ երդմանց»
(նոյն, Կ)։

Անտիոքացիք նախատեի էին զԳորգ ա-
նեցին՝ կտրելով մօրուքը, նա ազոր վրէժը

լուծելու համար, հինգ հարիւր թուրք զի-
նուոր առած՝ յանկարծակի յարձակեցաւ
կոտրեց անոնցմէ շատերը։ Յետոյ «երդման»
նոցա՝ այլ եւս չմասեւ, «արարին խա-
ղաղութիւն» և դարձան իրենց տեղերը
(Ուռհ. ձիւ)։

Ծ. — Հպատակութիւն — Ստորակար-
գեալը առ իշխանս ունեցած իրենց ան-
կեղծ հլութիւնը կարող էին ցուցնել երգ-
մամբ, եթէ պահանջուէր կամ կարեւոր
համարուէր այն — Վեր կ'իլնենք մինչեւ
Դ դար, և կը փոխադրուինք Ձերաւայ
դաշտը, ուր Հայոց բանակը Մուշեղայ
հրամանատարութեամբ պատրաստ է զար-
նուելու Պարսից հետ։ Հոն են նաեւ Ս.
Ներսէս և արքայն։ Կարճամիտն Պապ
կասկածոտ սպարապետին հաւատարմու-
թեան վրայ, խնդրեց հայրապետէն՝ թէ
«նախ երդումս տուի՝... զի մեզ մի՛ ստե-
ցէ»։ Վշտացաւ քաջը. բայց փութաց
հանդարտեցնել Արշակունւոյն խանգարուած
ուզեղը, և «երդմոյր» (Փաւս. Ե, Դ)։

Վեստ Սարգիս և Հայոց իշխանը խոր-
հեցան մատնել Բազրատունեաց ոստանն
Յունաց ձեռքը. և հայրապետին հետ միա-
սին կեղծաւորութեամբ կը յորդորէին ըզ-
Պագիկ՝ ընդունել կայսեր հրաւերն ի Կոս-
տանդնուպոլիս։ Երբ նա կը վարանէր,
վստահացնելու համար զինքն՝ երդունս
թէ վտանգի պահանքն պատրաստ էն տալ
իրենց կեանքը թագաւորին համար։ Եւ
այդ զաւաճան երդումը պատճառ եղաւ
մեր երկրորդ հարստութեան բարձմանը
(Ուռհ. ԿԵ)։

Պետրոս Գիտաղարձ տաղտկացած հայ
ազատանւոյն անկարգ ընթացքէն, զնաց
առանձնացաւ ի Վասպուրական։ Յետ չորս
տարւոյ՝ Յովհաննէս Թագաւորն և իշխանը
«թուղթ» մը գրեցին անոր, յորում կը
խոստանային «լինել ունկնդիր ամենայն
հրամանաց նորայ։ Եւ որպէս զի համո-
զիչ լինէր իրենց խոստումը, «գրեցին

1. Հին հայերենի մէջ այդ բացատրութիւնը չի նշա-
նակեր՝ ինք երդնուլ, այլ տալ երդնուլ, ինչպէս և Շա-
պուհ «այսր երդումն» Արշակայ, և Տեղբուն երկրորդ

«ետուն նմա զերդումն» (Փաւս. Գ. Ժզ, Ժդ)։ «Եզ եր-
դումն տուեալ», կ'ըսէր Յագիկոս Գինշապուհ (Նիշ-
Ը). և նոյն ձեւը կը գործածէ միշտ Միւ. Գուշ (51-56)։

զայս հանդերձ մեծամեծ երդմամբ », ուրով և հասան իրենց նպատակին (նոյն, ԽԳ)։

7. — ()ժռմն արքայական — Ազգային և քաղաքական ամենէն շքեղ առիթն էր այս՝ երգման համար, զոր կու տար ազգը իւր նորընտիր պաակաւորին։ Չեմ հանդիպած և չգիտեմ՝ թէ արդեօք Արշակունեաց օրով կա՞ր այս սովորութիւնը։ Ընդ հակառակն գտած եմ յիշատակութիւն յաջորդ երկու թագաւորութեանց շրջաննեւրէն։

Բագրատունեաց վերջին պայազատը Գագիկ կը պսակուէր յԱնի՝ Պետրոս Գե. տաղարձի ձեռամբ և ի ներկայութեան հայ իշխանաց ու զօրաց։ Յետ արարողութեան՝ հայրապետն և աւագանին իրենց հաւատարմութեան երդումը տուին վեհապետին. « երդմանս արարեալ ուխտից՝ միամտութեամբ ծառայել նմա » (Կիրակ. 52). — Խոստում մը զոր սակայն շատ շուտով պիտի մոռնային։ — Այս օրինակը բնականապէս կ'ենթադրէ ուրիշներ ալ, այսինքն տիրող սովորութիւնը Գագիկայ նախորդաց ժամանակ, թէեւ յայտնապէս յիշուած չգտնենք պատմաց քով։

Ռուբինեանց զահակաւորութեան առթիւ տրուած երգման հանդիպած եմ նոյն ինքն անոնց թագաւորօրէնէից կանոնին մէջ։ Այստեղ սակայն երդմնողաց դէմքերը փոխուած են։ Արեւմուտքը, այդ արարողութեան հետ՝ զոր ինք տուած էր մեզ Լամբրոնացւոյն թարգմանութեամբ, ներշնչեւ էր Հայոց համար նոր այս արեւմտեան գաղափարն ալ՝ թէ թագաւորը պարտէր երդնուլ՝ պահպանելու ազգին օրէնքն ու իրաւունքը, հակառակ Բագրատունեաց սովորութեան՝ որ տիրապետական հին ձեւով՝ ազգէն կը պահանջէր ծառայական հպատակութեան ուխտ։ « Կաթողիկոսն,

կ'ըսուի հոն, տայ երդնույ ընտրելոյն՝ ի վերայ սովորական իրաւանց »։ Այս կը լինէր արարողութեան սկիզբը. և այսպէս իւր հաւատարմութեան ապահովութիւնը տալէ վերջ միայն կ'ընդունէր օծումն ու թագը։

✱

Բ. ԵՐԻՄԵՈՂԻՔ¹

Պատշաճ կը համարիմ ասոնց մէջ բաժանում մը դնել՝ նախ ըստ հոգեկան հանգամանաց, որ է կրօնքը. երկրորդ՝ ըստ անձնական հանգամանաց, որ է հասանակն ու վիճակը, յկատենք զասոնք առանձնաբար։

1. — Խոսեմ երդմնողը։ — Այսպէս կու չենք տարբեր կրօնից պատկանողները։ Այս պարագային իւրացանչիւր կողմ կ'երդնուր իւր օրինաց գծած ձեւով։ Ոչ միայն՝ ուրովհետեւ պարտաւորիչ էր այդ ի կրօնից, այլ զի հակառակ՝ կողմանք ալ նախամեծար կը համարէին զայդ՝ իբրեւ աւելի վստահելի։ Այսպէս Շապուհ ստիպեց զԱրշակ երդնուլ « Աւետարանին » վրայ (Փաւս. Գ, Ժզ)։ Մեր թագաւորն ալ Շապուհի կոչին երթալու համար՝ իւրմէ պահանջեց՝ վարագապատկեր մատանեաւ կրնալու « աղ », որ Պարսից արքայից երդման յատուկ ձեւն էր՝ (անդ, Գ, Ժզ)։ — Հոնք ևս Հայերէն ընդունեցան « զերդումն քրիստոնէից », և փոխանակեցին զայն « ըստ կարգի իւրեանց օրինաց » (Եղիշ. Գ), որոյ ձեւը դժբախտաբար անձանօթ է։ — Նոյնը եղաւ միշտ մահմետականաց հետ յարաբերութեանց մէջ եւս։

2. — Քրիստոնեայ երդմնողը։ — Մըխիթար Գոշ ասոնց մասին զանազան կարգադրութիւններ կը սահմանէ կամ կ'աւանդէ՝ որոնց հետքը չենք գտներ հայ հնութեան մէջ։ Իւր նման իրաւագէտ մը

1. Այդ բանը Միխիթար Գոշի է (55)։

2. « Ուխտ աղի » ձեռնօթ էր Հրէից եւս (Բ Մնաց. ԺԳ, 5)։ — Աղք նշան էր բարեկամութեան և սիրոյ, ասկեց էր սովորութիւնն ալ « աղ և հաց » ընծայելու իշխանաւորաց՝ երբ այցելութեան երթային, ինչպէս կը

լինէր Յունաց, Պարսից և Հայոց մէջ։ Դեմշապուհ կ'ըսէր Ղեւոնդեանց՝ թէ « իմ զի աղ և հաց կերեալ է յաշխարհին ձերմու, զուրկ և սէր ունիմ առ աշխարհ » (Եղիշ. Ը)։

պէտք էր՝ որ զրէր և մեզ հասցնէր։ Հազիւ մէկ՝ երկու ականարկութեան հանդիպած եմ, որոց մին կը պատկանի հասակին։ Այսպէս Արտաշատու աշխարհախումբ երգման կը մասնակցին «ի մեծամեծաց մինչեւ ցփոյուն» (Եղիշ, Բ), ուր սակայն յայտնի չէ, հասակն փոքրեր էին թէ աստիճանաւ։ Յետոյ՝ դատաստանական երգում մը չէր այդ, որպէս զի երգմանողին անձնական հանգամանքներն հաշուի առնէին. այլ հաւատոց համագումար ուխտ մը՝ յորում խորու-թիւն չէր մտնէր հասակի։

Կ'ամփոփեմ հոս Մխիթարայ տեսութիւնքը։ — Երգում տալու համար հարկ է քսանեւէինգ տարեկանէն վար չլինել. զի տղայք անկարող են ըմբռնել երգման ոյժը։ — Երեւոյնիք և հիւանդք պէտք չէ երդնուն. գուցէ չապաշխարած մեռնին։ — Եւ ոչ ապաշխարողք, որպէս զի մեղք մեղաց վրայ չյաւելուն։ — Կ'արգելու գայն նաեւ կանանց՝ երբ հաւատաւոր են, կամ ապաշխարող, կամ անպարկեշտ, կամ տղայ, կամ պառաւ, կամ ծնանելու մօտ. արգելք մը՝ որ կը հիմնուի մի և նոյն պատճառաց վրայ։ — Մաքսաւորք, արբեցողք և մեղաւորք՝ ցորչափ կը մնան այդպիսիք, անընդունակ են երգման գործոյն՝ ապաշխարողաց համար տրուած պատճառաւ։ — Իսկ բոլոր ատոնց փոխարէն կարող են երդնուլ իրենց մերձաւոր ազգականք կամ բարեկամք։ Սոյն փոխանակութիւնը կը պատուիրէ նաեւ կրօնաւորաց ու քահանայից համար. ազգականք երթան յատան, որպէս զի երգումն ալ անոնք տան՝ երբ պահանջուի։ Միայն կրնան իբր վկայ ընդունուիլ (55-56)։

Մանդակունւոյն օրով երգմանու իրաւունքը չարախօսին էր, որով պիտի հաստատէր իւր ամբաստանութեան ստուգութիւնը. «Դատախազն, կ'ըսէ, դատախազէ և երդնու» (114)։ Ընդ հակառակն Մխիթար տարբերութիւն մը կը դնէ։ Սովորական յանցանաց համար պարտաւոր է երդնուլ ամբաստանեալը. և այս իրաւունքը կ'անցնի ամբաստանողին՝ եթէ իբր ճշգր

մարտախօս մարդ ճանչուած է։ — Իսկ քրէական դատաստանաց մէջ երգմանող պիտի լինի դատախազը. ապա թէ յանցաւորն ուժգին բողոքէ իւր անմեղութիւնը, և ատենին համոզիչ թուի, վերջինը պիտի երդնու (53-54)։

Այնու որ Մխիթարայ Դատաստանագիրքը գործածութեան մտած է, ինչպէս կ'ապացուցանէ հրատարակիչը Վ. Վ. Բատամանյանը՝ իւր յառաջարանութեան մէջ, կրնանք հետեւցնել՝ թէ վերոյիշեալ սահմանք լոկ մեռեալ տառ չմնացին։



Գ. ՏԵՂԻՔ ԵՐԻՄԱՆ

Նախնիք կը ջանային՝ ուր որ հնար էր՝ կատարել տալ երգումն այնպիսի վայրերու մէջ՝ որ առանձին կարեւորութիւն մ'ունէին կրօնապէս կամ քաղաքականապէս։ Անոնց մէջ ներկայութիւնը՝ պատշաճ կատարք մը կ'ազդէր երգմանու վրայ, որով անոնք լաւագոյն կը զգային կատարելի գործոյն ծանրութիւնը, և առ այն պահանջուած պատրաստութեամբ մը կը մատչէին անոր։ Այդ տեղեաց առաջինն էր՝

1. — Եկեղեցիք։ — Այնու որ երգումը կրօնական գործ համարուած էր թէ հեթանոսութենէն և թէ քրիստոնէութենէն, և կապուած սրբութեանց հետ (աստ, Դ), նախկին դարերուն պատշաճօրէն կը կատարուէր սովորաբար տաճարին մէջ։ Ասոր առաջին՝ ինչպէս և երիցագոյն վկայութիւնք գտած եմ Մանդակունւոյն քով։ Սա յետ նկարագրելու Հայոց աննիկիւղ երգմանհարութիւնը, կը յաւելու՝ թէ երբ օրինական երգման կը կոչուէին սրբավայրին մէջ, կ'ամփոփուէին և զգաստութեամբ մը ներս կը մտնէին. «Եւ յորժամ յեկեղեցիք երթան մտանել ի ներքս ի յերդնուլ, զարթնու իմն և խորհի, ընդէր. զի յերդնում երթամ՝ ասէ» (113)։ Հայրապետս՝ որ կը խորշի երգմանէն առ հասարակ, կը խրատէ եւս առիթ չտալ աղօթալարին մէջ կատարելի այդ երգմանց. «Ոչ նեղել զոք և զրկել, և ոչ

հակառակութեամբ երդմունս սատանայա-
կանս յեկեղեցի Աստուծոյ մուծանել» (116):
Արդէն տեսանց մեք՝ (աստ, Ա. 1) թէ այս
վկայութիւնը կ'ականարէ կենցաղական
խնդրոց, որոնք յետ քննուելու արտաքին
ստանիս առջեւ, իրենց վերջին լուծումը
կը ստանային երգմամբ՝ տաճարին նուի-
րական որմոց ներքեւ:

Գագկայ օծումն՝ որով և անոր հպա-
տակութեան երդումն ալ կատարուեցաւ
«աս դրոնս մեծափառ կարողիկէին Անույ»
(կիր. 52): — Նմանապէս Ռուբինեանցը
կը կատարուէր՝ յետ հանդիսական թա-
րորով գնալու «ի տաճարն սուրբ» և այդ
պահուն «ի մէջ եկեղեցոյն դադարեն»
երդումը տալու համար միայն, յետ որոյ
բեմը կ'ենէին:

Հայոց նամակն առ Միհրնեսի և եր-
դումն, որ կատարուեցաւ Արտաշատու մէջ
համախմբութեամբ եպիսկոպոսաց և նա-
խարարաց, և որ կը ներկայացնէր տե-
սակ մը եկեղեցական ժողով, այս եւս
հաւանորէն եկեղեցւոյ մէջ էր:

2. — Ատեան: — Փիւ դարուն կամ
Գոշի օրով եկեղեցին դադարած էր երգման
միակ վայր լինելէ, և փոխուած երգման
նիւթի (աստ, Գ. 8): Ընդ հակառակն դա-
տաստանական երդումը, հաւանորէն արա-
բական տիրապետութեան ազդեցութեան
ներքեւ, փոխադրուած էր «ի հրապարակ»,
— ինչպէս կ'անուանեն զատենը ոմանք ի
նախնեաց, և յատկապէս Շահապիվանու
ժողովը (կան. Ի) և Մխիթար: — Սա իսկ կը
հաստատէ այդ փոփոխութիւնը, երբ կ'ը-
սէ. «Ոչ է պարտ ի հրապարակին վայրա-
պար երդնուլ՝ մինչ չեւ դատաւորն վճռով
հրամայիցէ» (Նիդը. 2, 35), և կամ՝ «յոր-
ժամ գայցեն ի տեղի դատաստանին և դա-
տաւորն հրամայիցէ վասն իրաւանց դա-
տաստանին երդնուլ» (անդ, Ը, 46):

Բայց զատաւորն ալ իւր կարգին պիտի
ջանար «ատանց երդման» տեսնել դատը՝
եթէ հնար էր, և հակառակ պարագային
միայն դիմել այդ միջոցին (անդ, 52): Կ'ար-
գելու եւս Մխիթար երդնուլ թեթեւ խըն-
դրոց համար, զոր օրինակ տասն դահեկա-

նի. և եթէ պահանջող պնդէ, դատաւորը
պարտի պահանջին կէսը հատուցանել տալ
ամբաստանելոյն. իսկ երբ յանձն չառնու
աղքատութեան համար, դատաւորը կարէ
թոյլատրել երդումը, և կամ ժամանակ
շնորհել վիճող կողմանց իրաւախոհու-
թեան գալու (53):

3. — Պատահականք: — Թաճախ եւս
կը հանդիպէր երդնուլ՝ ուր որ դէպքը
և կամ պէտքը պահանջէր. այսինքն ա-
ռանց որ և է խորութեան տեղոյ: Զոր
օրինակ՝ Արշակ հիւր էր Շապուդ և կէս
մը կալանաւոր. ուրեմն պարտաւոր էր
երդնուլ արքունեաց մէջ և անոր առջեւ
(Փաւ. Գ, 37): — Մուշեղէ երդում պա-
հանջուեցաւ Նպատ յերսն վրայ՝ ուր կա-
յին արքայն ու կաթողիկոսը. ուրեմն կը
մնար հոն իսկ տալ զայն (նոյն, Ե, 7): —
Վարդանանք և ուխտակիցք հարկադրուած
էին զատուիլ իրարմէ «ի ձանապարհին»
Պարսկաստանի, որով և հոն ալ երդնուլ
(Փրպ. ԻԸ): — Երկրորդ երդումը կնքեցին
մարզպանին տան մէջ, ուր «մտին թալ»
ստիպելու համար զինքն ապաստարանութեան,
և ուր ժամանակ չկար զանդադելու (նոյն,
ԼԲ): — Հոնաց նիզակակցութեան եր-
դումը տուին անոնց պահակիկն մէջ, ուր
մղած էր զիրենք զինուոց պէտքը (Եղիշ.
Գ): — Աշոտ և Սահակ հաշտութեան
ուխտը կնքեցին մարտի ձախտին մէջ,
ուր երկու բանակները պիտի զատուէին
իրարմէ այդ պայմանաւ (ԲՏ. Կթղ. Կ):
Բոլոր այդ երգմունք օրինաւոր էին ար-
տաքոյ կանոնական տեղոյ, երբ միւս
կրօնական ձեւակերպութիւնք կը գործա-
դրուէին անթերի:

✱

Գ. ՍՐԲՈՒԹԻՒՆՔ

Նախնեաց այս բառով կ'ուզեմ կոչել այն
արքազան իրերը՝ որոց վրայ կը կատարուէր
երդումը: Կրօնից նուիրագործած նիւթոց
մէջ աստուածեղէն ծածուկ զօրութիւն մը
դրած է քրիստոնէութիւնը, ինչպէս ուրիշ
ամէն կրօններ ալ: Անոնց ներկայութիւնը

երգման՝ կը նշանակէր ներկայութիւնն այդ զօրութեան գերագոյն Աղբեր՝ Վկայ ունենալով զանոնք, երգմնողը կը զգային՝ թէ որո՞յ առջեւ կ'երգնուն. անոր որ կը տեսնէ արտին զաղտնիքները և կը պատժէ ճշմարտութենէ հեռացողները: Հետեւաբար այդ սրբութիւնը լաւագոյն զբաւականները կը համարուէին երգման ճշգրտութեանը: Աղոնք են.

1. — Աջ Հայրապետի և Արքայի: — Դրած վերնագիրս նուազ կը համաձայնի ասոնց. բայց հարկ է մեզ նախ զայս տեսնել անոր համար՝ որ թէ ժամանակաւ և թէ յիշատակութեամբ հնագոյնն են երգման ուրիշ ենթակայից: Կը հանդիպինք իրենց Մուշեղայ ծանօթ երգման պարագային մէջ: Նոյն ինքն Պապ էր՝ որ առաջարկեց հայրապետին երգմնեցնել սպարապետն իւր աջ ձեռին վրայ. « Նախ երգումն տուր յԱջ քո »: Եւ Մուշեղ մօտեցաւ բռնեց զայն, « բռնեց հարկանքը զԱյոյ եպիսկոպոսապետին », և այնպէս երգուաւ: Նոյն գործողութիւնը կատարեց ապա արքային աջոյն վրայ եւս. « սոյնպէս և ի (Այ) Թագաւորին Պապայ ձեռն արկանքը՝ երգոյր », կ'ըսէ պատմիչը (Փաւս. Ե, 7):

Այս ձեւին իմաստն յայտնի է. հայրապետն աջով կը ձեռնադրէր, անով կը կրէր հովուական գաւազանը և անով կ'օրհնէր ժողովուրդը: Իսկ Թագաւորն աջով կու տար իւր հրամանները և անով կը բռնէր աշխարհավար սուսերը: Պարզ ըսենք, աջն էր հայրապետական կամ արքայական իշխանութեան խորհրդանշանը. և երգումն աջոյն վրայ՝ երգնուլ էր անոնց իշխանութեան վրայ:

Այս սովորութեան ծագումը կ'ախտը ժիւմ հեթանոսութեան մէջ գնել՝ երկու փաստերով: Նախ՝ զի հայ հեթանոսութեան շատ մօտիկը կը գտնենք զայն, և յետոյ այլ եւս չի տեսնուիր: — Երկրորդ՝ զի անոր հանդիպած եմ օտարաց քով եւս. գոր օրինակ՝ Սալուստիոս կը պատմէ, թէ Նումիդիոյ Թագաւորը Միկի-փաս՝ իւր որդւոյն նոյն այդ ձեւով երգնուլ տուաւ. « Կ'երգմնեցնեմ զքեզ այս

աշոյս և Թագաւորութեանս վրայ՝ » (Պարզ. Յուգ. Ժ):

2. — Անտարան: — Այս է հնութեան և կարեւորութեան կարգաւ երգման յատուկ առաջին սրբութիւնը. և նոյն իսկ ժամանակակից ալ է նախորդին հետ մեր քրիստոնէութեան առաջին շրջանին մէջ: Այնքան մեծ էր անոր նշանակութիւնը՝ ոչ միայն յաջա ջրիստոնէից, այլ և հեթանոսաց, որ անոր վրայ հաստատուած երգումը բացարձակ վստահութիւն կը վստիւէր: Շապուհ՝ Արշակայ երգումը պապանջեց « ի գլխաւորութիւն այնմ՝ զոր Անտարանն կոչեն... որ է գլխաւորութիւն ուսմանց նոցա քրիստոնէութեանն », ինչպէս ինք կ'ըսէր (Փաւս. Դ, Ժդ). ուստի « բերին զԱնտարանն սուրբ », և Շապուհ տուաւ « երգնուլ յաստուածեան Անտարանն » (անդ, Դ, Ժգ):

Անոր ասպարէզը շատ աւելի ընդարձակ է Վարդանանց պատերազմի ժամանակ, և ակներեւ մինչեւ վերջին դարերը: Վասակ որսալու համար Վարդանանց համակիրները, « սուրբ Անտարանաւ » սուտ երգումներ կը յղէր ամէն կողմ, իբր թէ Թագկերտ թոյլ կու տար քրիստոնէութիւնը (Եղիշ. Դ): Նոյնպէս յետ մեծ ճակատամարտին՝ ձերբակալելու համար փախըստակներն էր, « յերգմունս ապաստանեւ զեալ » երկու երեք անգամ « ետուն տանել զԱնտարանն » (նոյն, Է): — Վահանեանք « բերեալ սուրբ Անտարան », անոր վրայ հիմնեցին իրենց հաւատարմութեան ուխտը (Փրպ. Կ2): — Շնորհալույն օրով դեռ կ'երգնուն « յԱնտարանն սուրբ » (Լիւդհ. 192), կամ « յԱնտարան » ըստ Գորշի (51-52), ծանօթ նաեւ Գր. Տաթևացոյն (հտ. ձմր. 16):

3. — Անտարան ուխտին կամ երպման: — Պատմական յատուկ կոչումն է սա

1. Հրէից մէջ ալ երբեմն յիշուած է նոյնը. բայց ոչ սովորական, այլ Աստուծոյ համար ըստու. « Երբորայց յայդ էմ » (Բ Թր. ԺԲ. 40), կամ « Երբուեա Տէր զօրու թեանց ի քաղուկ իւր » (Երեմ. ԾԱ, 14). և որ ոչ մի դեր չէ կարող ունեցած լինել մեր սովորութեան մէջ:

այն չընաղ հատորին՝ որ վկայ հանդիսացաւ Աւարայրի քաջազանց անկեղծ և ջերմեանդն զգացմանց, և որ չի կրնար վրիպիլ մեր ուշադրութենէն: Առաջին անգամ այդ անուամբ մկրտեցաւ այն Տիգրանի մէջ. «զսուրբ Աւետարան ուխտիս» (Փրպ. Իէ). այսինքն այն երդման՝ զոր նախարարը տուին հոն իրարու (աստ, Ա, 3): Այդ մատենան այնուհետեւ անոնց հետ և անոնց ետեւէն կը ըրջի միշտ: — Վարդան երբ լքած իւր հայրենակցաց երկրի մի ընթացքէն, կը փորձէր փախչիլ ի Յուսատան, իշխանը հասուցին անոր և տեւէն «զկնքեալ Աւետարանն ուխտիս» կամ «զԱւետարանն երդման», զոր դեսպանը բռնած՝ այնպէս և անոր անուամբ կը խօսէին. «ունէին առաջի երանելոյն Վարդանայ և եղբարց նորա» (Փրպ. Լ): — Ապստամբութեան սկիզբը բոլոր բանակն իւր առջեւ ունի «զԱւետարանն ուխտիս սրբոյ», և անոր վրայ կը կրկնէ իւր հին երդումը (անդ, ԼԲ), և միանգամայն կ'աղօթեն հաստատուն մնալ «յոխտի սուրբ Աւետարանիս» (Եղիշ. Գ): Վերջապէս այն է հասարակաց միութեան զօրն և առջնորդ ամէն տեղ — Որ քիտէ՝ ո՛ր զնաց ծածկուեցաւ արդ մեծ յիշատակը մեր տոհմային պատմութեան մեծագոյն անցքին: Գուցէ թաղուեցաւ Արտազու փոշիներուն մէջ՝ հայ քաջաց նուիրական ոսկերաց քով, ննջելու յանդիմանական քունը:

4. — Աւետարանի գորտրիներ: — Նկատելի շատ կարեւոր կէտ մ'է այս՝ ճանաչելու համար հին հայ ժողովրդեան հոգեբանութիւնը: Վարդան վերոյիշեալ փախըստեան դիպուածին մէջ աղօր զեղեցիկ մէկ օրինակը կու տայ: Դեսպանաց առջեւ թափեց սրտին դառնութիւնը Հայոց յեղեղուկ նենգամտութեան դէմ, յայտնելով՝ թէ ոչ ի շնորհս եկողաց, այլ Աւետարանին համար կը դառնար. «Բայց սուրբ և երկնաւոր հրաւիրակիդ Աւետարանի՝ ոչ կացեալ որ է ընդդէմ ի մեր ազգէն (Մատիականեանց), և ոչ մեք կամք. քաւ լիցիս»: Եւ թողուց՝ որ անոնց սիրաւ կարդայ

«սուրբ Աւետարանը՝ որ ձառնէ զամենայն և դատի բոս իւրաքանչիւր գործոցն» (Փրպ. Լ):

Ուրացեալն Վասակ դուրս տուաւ սրտին մութ գոյնը և ձերբալաւուեցաւ ուխտապահներէն. առիթն էր քարկոծելու զայն, ինչպէս ըրին ուրիշ իրեն նմանող մը: Նա սակայն գիտէր՝ թէ ո՛ր ապաւինելու էր. վերստին երդուաւ «ի սուրբ Աւետարանն»: Ինչ ընէին անոնք: Թէեւ «հաստատեալ գիտէին» կ'ըսէ Եղիշէ՝ աւոր կեղծաւորութիւնը, սակայն և այնպէս ներեցին, և «սուրբ Աւետարանին թողին ի դատապարտութիւն» (յեղ. Գ): — Պատեւրազմէն վերջ Հայոց սրտին մէջ վստահութեան ինչ կայծ կրնար մնալ դեռ հանդէպ մատնչին: Եւ սակայն երբ նա Աւետարանը կը յղէր փախստէից, անրացատրելի ծածուկ ոյժ մը կը մղէր քահանայը բերդերէն վար, և «յանձն առնուին զիջանելն», մինչ զգուշաւոր զօրականը անյողողդ կը մնան (Եղիշ. Ե): — Նոյնը պատահեցաւ նաեւ Կապոյտ լեռան ամրոցին առջեւ, ուր «վասն երդմանցն հարկ եղեւ քահանայի մի իշանել առ նոսա», որ և իսկոյն գերի տառնեցաւ (անդ):

Մի և նոյն հոգին կը տեսնենք Վահանեանց վրայ եւս: Վախտանգ՝ վրաց թագաւորը, զինակից իրենց և Պարսից զաւտնի կուսակից, կը խաբխարէր զանոնք: Իսկ Հայոց գունդը՝ «վասն զի ուխտադիր էր» անոր հետ, «զոր ինչ միանգամ աւել ստոյգ կամ սուտ», կամաւ և գիտութեամբ «ջանային վասն Աւետարանին երկայի զամենայն կատարել» (Փրպ. ԶԳ). ցորչափ յայտնապէս չէր անշատուած իրենցմէ, ստիպուած էին յարգել իրենց երդումը:

Ինչպէս մեկնել այս երևոյթը. փորձենք: Հայ ազգը մէկ ու կէս դարէ ի վեր քրիստոնեայ, դեռ նոր հասկացեր էր քրիստոնէութիւնը. դեռ նոր ծանօթացեր էր Աւետարանին, որ մինչեւ այն ժամանակ օտար լեզուաց յարազուրին ետեւ ծածկուած, հանց յանձնեց զայն անոր Ս. Մեսրոբ տոհմային լեզուաւ: Կախարդիչ

էր անոր նախընծայ Հրապոյրը՝ զոր աւելի կ'արծարծէին մեծ վարդապետին հոգեկից աշակերտները, որոնք կ'ապրէին տակաւին իրենց մէջ և կ'առաջնորդէին իրենց։ Հայ ազնուականութիւնը լափեր էր Ս. Գիրքը Հայացած օրէն. վարդապետ «տեղեակ էր ի մանկութենէ իւրմէ սուրբ Կտակարանաց», զոր Աւարայրի մէջ անգամ քաջած՝ կը կարդար ի լուր իւր բանակին (Եղիշ. Ե)։ Ս. Ղեւոնդ չէր վարաններ ըսելու զօրականին՝ թէ դուք «քան զիս տեղեկագոյն և հմուտըք էք սուրբ Կտակարանացն» (անդ)։ Այդ «աստուածաշունչ» մատենին քաղցր հմայքը թափանցեր էր մինչեւ անոնց ոսկերաց մէջ, գերած անոնց միտքը, և մանկան մը հլուութիւնն ու վստահութիւնը դրած էր անոնց սրտին մէջ, ամանաւանդ հանդէպ Աւետարանին՝ զոր իրենց «հայր» կը դաւանին (անդ, Գ)։ որ իբրեւ բանալի տէր էր՝ կը ձանաչէ, կը դատի ու կը դատապարտէ. որմէ օտարացումը չեն համարձակիր պատժել անձամբ, և որոյ վրայ հիմնուած երդման չեն ուզեր առաջին լուծողը լինել՝ երբ արդարացի փաստեր ունին նենգամիտ ուխտադրոժներէ։

Ե. — Խաչ։ — Երկրորդ ենթակայն էր երդման, և ժամանակաւ ոչ կրտսեր քան աւետարանը։ Մանդակունւոյն քով իսկ տեսանք՝ թէ ինչպէս իւր ժամանակակիցը կ'երդնուին նաեւ «ի սուրբ Խաչն Քրիստոսի» (118)։ — Աշոտ բազրատունւոյ և նիզակակցաց երդումը նմանապէս կատարուեցաւ «միջնորդութեամբ տէրունեան Նշանի» (Ղեւոնդ, ԻԶ)։ և Աշոտ Երկաթին Սահակայ հետ՝ «միջնորդութեամբ սրբոյ Նշանի Խաչի» (ՅՏ. կթղ. Կ)։ — Հաւասարապէս ծանօթ է «ի Խաչ» երդումը՝ Շնորհալույս (Ընդհր. 192), Մխիթար Գոշի (51-52) և Տաթեւացւոյն ալ (հտ. մր. 16)։

Դիտելի է՝ որ այդ օրինակաց մէջ կը ներկայանայ խաչը միայնակ։ Յետոյ՝ չէ ունեցած Աւետարանի ընդարձակ գործածութիւնը, և աւելի յաճախեալ էր միջին դարուն քան յառաջ, եթէ հաստատուինք մեր ունեցած վկայութեանց վրայ։

Ե. — Աւետարան և Խաչ։ — Պակաս չեն նաեւ երկու սրբութեանց միասին գործածութեան փաստերը։ Կը պատմէ Եղիշէ՝ թէ Վասակ իւր խաբերայ երդմանց վկայ կը զրկէր նաեւ «Աւետարան հանդերձ Խաչի» (յեղ. Գ)։ Իսկ Փարպեցին՝ թէ Վահանեանց ու Վարդանշապ կնքած ուխտն էր «Աւետարանաւ և Խաչի» միանգամայն (ՀԳ)։ Աւելի ուշ՝ Գորգ անեցին Անտիոքացւոց հետ իւր հաշտական երդումը վաւերացուց նոյնպէս «Խաչով և Աւետարանով» (Ուռ. ձԻԳ)։ — Կը տեսնենք սակայն՝ որ այս ձեւը նախորդներէն շատ սակաւագէտ է, և աւելի երիցագոյն շրջանին սեպհական։

Զ. — Անուն Աստուծոյ։ — Թէեւ հին, բայց շատ նուազ նիւթ եղած է երդմանց։ Թերեւս իւր մեծութիւնը կը պատկառեցնէր Հայերը, և կը զգուշանային անկից։ Աւագագոյն աղբիւրներէն Մանդակունին է զայս յիշատակողը իւր հետագայ խօսքով, յորում միանգամայն կը պարզէ իմ ըսած միտքը. «Մի՛ վայրապար ընդ Աստուծոյ յուխտ մտցուք, և զսուրբ Անուն Աստուծոյ ընդ երդմանն կապեսցուք» (116)։ Պատմական ծանօթ դիպուածոց մէջ ասոր օրինակին չենք հանդիպիր. նշան՝ թէ որքան հազուադէպ էր այս ձեւը Ե դարուն և յետոյ եւս, կամ աւելի գեղծման արդիւնը։ Ընդ հակառակն ժԲ դարու մէջ աւելի սովորական և օրինական դարձած է, ինչպէս կը հետեւցնեն Շնորհալույս զգուշացնելէն՝ մի՛ «յօժարութեամբ դիմել յերդմունս յԱնուն Աստուծոյ» և այլ սրբութեանց (192)։ Այս ալ տակաւին այլալիժօնից հետ պատահած ծանրագոյն խնդրոց մէջ էր, երբ անոնք այդպէս կը պահանջէին. վասն զի Մխիթար Գոշ կ'արգելու «աւելի ինչ երդումն»։ քան միւս ծանօթ սրբութեանց վրայ (52)։

1. Ժամանակին Յունաց ախորժիկ ձեռն էր այդ. Մոնախ մեր Գազկայ երջումը գրկեց՝ «միջնորդութեամբ սրբոյ աւետարանին և սրբոյ նշանին Քրիստոսի» (Ուռ. ԿԵ)։

8. — Եկեղեցի: — Երբեմն վայր երդման, ինչպէս տեսանք (Գ, 1), միջին դարուն փոխուած եղած էր նաեւ նիւթ¹: Չայս յիշատակողն է նոյն Մխիթար, երբ կը խօսի երդման իւր ժամանակի երեւակ սրբութեանց վրայ. «ի խաչ և յաւետարան և յեկեղեցի» (51). կամ «ի խաչ և յեկեղեցի և յաւետարան» (52). ուր տաճարին ճիշդ այն դերը կ'ընծայէ՝ ինչ որ այլոց: Հետեւաբար այն ոճով կ'երդնուին ասոր վրայ, ինչ որ միւս երկուց. զի մի և նոյն հոլովն ունի, որ վրայ կը նշանակէ, և ոչ մէջ: Բնական է. ո՞չ ապաքէն Աստուծոյ տունն ալ մեծ սրբութիւն մ'էր հաւասար այլոց, և սրժանի մի և նոյն պատուին: — Այս կիտիս վերստին պիտի դառնանք ուրիշ փաստերով (աստ. Ե, 3). և նոյնը կը զօրանայ յաշորդ օրինակով ալ:

9. — Անոյ հազար և մի եկեղեցի: — Բազրատունիք իրենց ոստանը պնծած էին չընաղ դաստակերտներով, որոց մէջ առաջին տեղը կը բռնէին յոգնախուռն և զեղաշէն տաճարները, որոնք դերուց և ազգաց բերած աւերներէն վերջ դեռ բարձր պիտի բռնէին իրենց գլուխը: Ուռնայեցին պատմելով քաղաքին առումն Ալփարսլանէ 1064ին, կ'ըսէ՝ թէ «յայմ աւուր հազար և մէկ եկեղեցի ի պատարագի կայր ի յԱնի» (29): Կրնայ այս թիւն անորոշ բազմութիւն մը նշանակել, ինչպէս կ'ըսէ Կիրակոս նոյն քաղաքին համար՝ թէ «եկեղեցի բազում կայր ի նմա» (ԻԵ): Պէտք է նաև «եկեղեցին» մատրանածու խորան իմանալ, ինչպէս այն ժամանակ սովորութիւն էր կոչել: Յամենայն դէպս Անին մեծ էր յաչս Հայոց, անոնց Երուսաղէմն էր: Հրեայք կ'երդնուին Երուսաղէմի և կամ տաճարին վրայ². Իսկ

Հայք, կը յաւելու Կիրակոս, «ի կարգ խօսից երդման այսպէս երդնուին. Անոյ հազար և մի եկեղեցին»: Անցեալ ժամանակաւ կը խօսի պատմիչս, «երդնուին». ուրեմն այդ սովորութիւնը հին էր քան ժ. Գ դար. այսինքն ոստանին պայծառութեան շրջանին յատուկ: — Սիրուն և անցած յիշատակ:

10. — Բաժակ պատարագին: — Տարօրինակ և միանգամայն անհեթեթ դիպուածի մ'առջեւ կը դնէ զմեզ Մտթ. Ուռնայեցին, երբ պատմելով հայ իշխանաց առ Գագիկ տուած երդումը (Աստ. Ա, 6), կը յիշէ տէրունական րաժակին ներկայութիւնն այն տեղ՝ ո՞չ որպէս վրկայ, այլ իբրեւ մկրտ գրութեան. «Բեւրին, կ'ըսէ, զսուր խորհուրդն մարմնոյ և արեան որդոյն Աստուծոյ, և քանային զգրիչն յԱրիմն կենարարին, և արարին երդման գիր հայրապետն և ամենայն իշխանքն Հայոց» (նկ): Մեր քրիստոնէական զգացմանց դէմ կ'ընդդիմ այս. հաւատանք ասոր: Եւ ինչո՞ւ ոչ: Դաւաճաններ՝ որոնք սուտ երդմամբ կը մատենէ թագաւոր և Անին, ինչո՞ւ խղճէին այդ սրբապղծութենէն: Յետոյ՝ այսպիսի անուր գործ մ'ինչպէս կրնար երեւակայել պատմիչը, եթէ իրօք կատարուած չլինէր: Թող որ այդ ժամանակի Հայոց մտքէն այնքան հեռի բան մ'ալ չէր այս. Դաւաճանք թողոյն հնարողը կ'ուզէ՝ որ Դաւուն Հովմայ և Հայոց քաղաքական ու եկեղեցական գլուխներն ալ նոյն ոճով դրած լինին իրենց դաշնը. «Եւ յաղագս հաւատարմութեան հաստատուն և անջրկի ուխտիս մերոյ, կ'ըսուի հոն, զահագին և զանգին Արիմն փրիստոսի ի մկրտն խառնեալ՝ զրեցաք Փրեբք (եղբարք) միմեանց՝ արեւմտեան և արեւելեան ազգս»: Արդ՝ երկու օրինակներս ձեւով ու շրջանով կատարելապէս կը շօշափեն ու կը զօրացնեն զիրար, ուստի և մեր հաւատքն ալ՝ նախարարաց ըրածին վրայ:

1. Մտաւով մերտ վայր ալ, ինչպէս կը հետեւի Տաթեւացոյն ստ երդնածեմն. «Գիտէ Տէր և այս իւայն և այս եկեղեցիս» (հտ. մտ. 16). ուր երդումը կը կատարուի խաչին վրայ և եկեղեցոյ մէջ. և որ մինչեւ ցարդ չէ տեսնուի դեռ տեղ տեղ մեր ժողովրդի հոն րով:

2. Մատթ. Ե, 35. ԻԳ, 16, 21.